ՀԻՆԱՅԱԴՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳՈՒՄ

ՆԱՐԻՆԵ ՇԱՄԱՄՅԱՆ

*Հարսանեկան ծիսական համակարգում հ*ինայելու *արարողությունը շատ կոնկրետ է՝ գրեթե բոլոր ազգագավառներում ընկնում է ուրբաթ օրվա գիշերը: Հինայադրման ողջ ընթացքը ուղեկցվում էր հանդիսավոր տեսարաններով, որոնց անբաժանելի մասն էին կազմում երթերը, պարերը, երգերը: Հինայադրման արարողությունը, հատկապես հինայի գիշերը կազմակերպվող հանդիսավոր արարողություններում՝ փեսայի տանից դեպի հարսնացուի տուն, մեծամասնությամբ կատարվում էր կանանց ուժերով: Հատկապես մեծ դերակատարություն ուներ հինա դնող հմուտ* վարպետը*: Վերջինս հիմնականում լինում էր գյուղի ճանաչված, հմայությամբ զբաղվող փորձառու* պառավ կինը *կամ փեսայի մոր լիազորությունը ստացած կինը: Այդ կնոջ կերպարում կարող էր հանդես գալ* քավորկինը, մեծ հարսներից որևէ մեկը*: Իսկ տղամարդկանց հավաքույթում ստանձնում էր* քավորը, ազապբաշին, *գյուղի* ավագներից *որևէ մեկը, ում դարձյալ ընտրում էին նախօրոք:*

Հինադրեքի ծեսում պարերի կենտրոնական դերակատարը դարձյալ հինա դնող կինն էր: Գողթնում հարսնացուի տանը ընթրիքից հետո սանամայրը, հինայի ափսեն գլխին դրած, պարում էր, իսկ հրավիրյալները դրամներ էին գցում հինայի ափսեի մեջ: Այնուհետև նրան հետևում էին հարսներն ու աղջիկները: Սանամայրը վերցնում էր իրեն նվիրված դրամները և հինան շաղախում: Շաղախելուց հետո հինա էր դնում հարսի ձեռքերն ու ոտքերը, ապա՝ մյուս աղջիկների միայն ձեռքերը[1]*: Վասպուրականում*[2] *փեսայի քրոջ կամ փեսայի տան հարսներից մեկի գլխին դրած հինան տանում էին դաֆ ու զուռնի առաջնորդությամբ:Հինան՝շաղախված, դրվում էր մատուցարանի վրա,որի եզրերին մոմեր էին վառվում: Հինայի ափսեի շուրջ լցված էր լինում մեծ քանակությամբ շաքար ու միրգ: Հինա բերողը, մատուցարանը գլխին դրած, պարում էր և ապա հինան հանձնում հարսնացուի մորը՝ նվեր ստանալով: Անմիջապես առաջ էին բերում հարսնացուին, գլխին երկու լավաշ հաց խաչաձև դնելով՝ օրհնում էին «Աստված շատ հաց տա» բանաձևով և հինան դնում հարսնացուի ձեռքերին: Բոլոր կանայք պարտավոր էին հինա դնել իրենց ձեռքերը՝ բացի սգավորներից: Բուրվարի գավառում հարսի ձեռքերը հինա դնելուց առաջ թույլտվություն էր խնդրվում հարսի ծնողներից՝ «Բարեկամներ, իրավունք տվեք խինա» որից հետո ազապբաշին հարսնացուին*

[1] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Գողթն.– «Ազգագրական հանդես» (այսուհետ՝ ԱՀ), հ. XII, Թիֆլիս, 1905, էջ 126:*
[2] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վան-Տոսպ – Հայոց Զոր.– ԱՀ, հ. XX, Թիֆլիս, 1910, էջ 150–151:*

դրամական պարգև էր տալիս՝ «խինաբանդու»: Եթե հարսնացուին դրամ չտային, նա ափերը չէր բացի հինայելու համար: Այնուհետև հարսնացուի քույրը կամ հարսներից մեկը, շաղախած հինան մաղի մեջ դրած և մաղի եզրագծով մոմեր վառած, դրանք գլխին դրած՝ պարելով մոտենում էր հարսին. Հարսի աջ ձեռքը հինայում էր նրա ազգական կանանցից մեկը, իսկ ձախը՝ փեսայի կին ազգականներից մեկը[3]*:*

Վայոց Ձորում ազապբաշին երաժիշտների առաջնորդությամբ այցելում էր քավորին[4]*: Քավորի տանը բերվում էր հինան՝ քավորակնոջ գլխին դրած սկուտեղի մեջ: Քավորակինը հինան* խաղացնում *էր (գլխին դրած պարում էր), հետո դնում էր քահանայի, ավագների առջև, ովքեր օրհնում էին հինան, բարեմաղթելով՝ «Աստված շնորհավոր անե»: Օրհնությունից հետո թույլատրվում էր ճկույթները թաթախել հինայի մեջ և դրամական նվեր դնել սկուտեղի մեջ, որը պարեցնող կնոջ բաժինն էր:*

Բայազետում հինա խաղացնելու, պարելու *արարողությունը տեղի էր ունենում փեսայի թուրը վաճառելուց անմիջապես հետո*[5]*: Այստեղ հինան պարեցնում էր նորահարսներից մեկը: Պարը, ըստ երևույթին, բավական բարդ պար էր, քանի որ սկուտեղը գլխավերևում էր դրվում, և պարողը հնարավորություն չուներ այն ձեռքերով բռնելու, քանի որ երկու ձեռքերն էլ զբաղված էին: Մի ձեռքին բռնում էր վառվող մեղրամոմը, մյուսին՝ թաշկինակը և պարում էր՝ հինան խաղացնում, իսկ նրա շուրջ՝ կլոր շրջան կազմած, պարում էին երիտասարդ հարսներն ու աղջիկները: Դերսիմում հինան պարեցնում էին գիշերը, տան կտուրին*[6]*: Մեծ ափսեի մեջ դնում էին հինան, իսկ ափսեի եզրերով՝ վառում մոմեր: Պարողը աջ ձեռքով բարձր պահում էր հինայի ափսեն և պարը կատարում էր պարաշրջանի կենտրոնում: Այնուհետև ափսեն փոխանցում էր մեկ ուրիշի՝ մտնելով պարաշրջան: Պարողները միայն երիտասարդ աղջիկներ և հարսներ էին :*

Հինադրեքի ծեսում կատարվող պարերը դանդաղ էին, ունեին հանդիսավոր բնույթ: Պարաքայլերը հիմնականում լինում էին՝

Երկու քայլ աջ, երկու քայլ ձախ,
Երկու քայլ աջ, մեկ քայլ ձախ,
Օձաձև կամ սյուզմա տալով[7]:

Կատարվող մենապարերը (թաք պարերը) կատարողներից պահանջում էին մեծ վարպետություն: Պարի մեջ հարկավոր էր պահել հավասարակշռությունը, քանի որ գլխավերևում՝ առանց ձեռքերի միջամտության, պետք է պահվեր սկուտեղը և որպեսզի այն չընկներ կամ, առավել ևս, չհանգչեին վառվող մեղրամոմերը, հարկավոր էր պարել առավել դանդաղ: Պարելու ընթացքում մոմերի հանգչելը համարվում էր վտանգավոր,

---

[3] *Ա. Շ ա հ բ ա զ յ ա ն. Նշխարներ Բուրվարի գավառի պատմության և ազգագրության, Թեհրան, 2003, էջ 165–168:*

[4] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վայոց Ձոր.– ԱՀ, հ. XIII, Թիֆլիս, 1906, էջ 155:*

[5] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Բայազեթ.– ԱՀ, հ. XVI, Թիֆլիս, 1907, էջ 21–22:*

[6] *Հ. Մ ն ձ ո ւ ր ի. Երկեր, Երևան, 1986, էջ 318:*

[7] *Դաշտային ազգագրական նյութ (այսուհետև՝ ԴԱՆ), 2010, Արտաշատի շրջան, գյուղ Այգեստան, ասացող՝ Օֆիկ Սահակյան, ծնվ. 1928 թ.:*

չարագուշակ ամուսնացող զույգի համար[8]: Այդ իսկ պատճառով՝ թաք պարը կատարվել է պարաշրջանի կենտրոնում՝ չարքերից, արտաքին աշխարհի վնասատու ուժերից զերծ պահելու համար: Դա է նաև հիմնական պատճառներից մեկը, որ սկեսուրը հատուկ էր ընտրում հինայի արարողության գլխավոր անձին, քանի որ լիազորված անդամը ոչ միայն ղեկավարելու էր արարողությունը, այլև պատասխանատու էր թաք պար կատարելու մեջ, որը բավականին բարդ է իր կատարողական ձևով: Բացի այդ, կատարվող պարը նաև վարպետության ցուցադրություն էր. որքան ճշգրիտ, հմուտ կատարվեր պարը, այնքան ազդեցիկ կլիներ հմայությունը:

Հինայադրման արարողության մեջ պարի կատարման ձևերն ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են տարածաշրջանով: Հին Ջուղայում քավորակինը կամ փեսայի քույրը, կանաչ-կարմիր կոսպանտը ձեռքին պարելով, մոտենում էին փեսային և ժապավենները մտցնում տաբատի գոտու մեջ՝ առանց քարկապ գցելու: Ապա, ափսեով շաղախած հինան պարեցնելով, մոտեցնում էին փեսային: Վերջինս աջ ձեռքի ճկույթ մատը թաթախում էր հինայի զանգվածի մեջ: Փեսայից հետո իրենց մատերը հինայում էին քավորը, խաչեղբայրը, ազապները՝ դրամական նվերներ դնելով հինայի սկուտեղի վրա[9]: Ղազախում փեսայի քույրը, պարելով, մետաքսե ժապավենը օդի մեջ ծածանելով, ծանրաքայլ մոտենում էր եղբորը և այն ամրացնում աջ ուսից դեպի ձախ թևատակին[10]: Բուրվարի գավառում փեսայի քույրն էր հինայում և պարեցնելով կապում կանաչ կոսպանտը[11]: Նշված շրջաններում հինայելու գործողությունը զուգորդվում էր կոզբանտ կապելու արարողության հետ: Պարելու տեմպը դանդաղ էր և, ըստ երևույթին, բաղկացած էր ծանր պարաքայլերից:

Հինան տանողների երթը *կազմվում էր կանանց խմբի ղեկավարի ազդանշանով, ինչը և հրահանգ էր երաժիշտներին՝ հնչեցնել երթի եղանակը: Վայոց Ձորում քավորակնոջ գլխին դրած հինան տանում էին հարսնացուի տուն, որտեղ նույնպես պարեցնում էին, նվերներ հավաքում և հարսի ձեռքերը հինա դնում[12]:*

Ագուլիսում երթի մասնակից էին լինում միայն ընտրված անձինք: Նախքան հարսնացուի տուն գնալը, ազապները նուռով կամ խնձորով գնում էին քավորի տուն՝ վերջինիս և քավորակնոջը հրավիրելու հինադրեքի արարողությանը:Քավորակինը իր հետ վերցնում էր անհրաժեշտ պարագաները,որոնք հարկավոր էին զոհաբերվող խոյին զարդարելու համար. շաքար,կանաչ-կարմիր մետաքսե ժապավեններ,ինչպես նաև հինան՝մեծ սկուտեղի մեջ դրված:Հինան հարկավոր էր ոչ միայն հարսի ձեռքերը հինայելու,այլև խոյի ողջ մարմինը խորհրդանշական խաչաձև պատկերներով զարդանախշելու համար: Երիտասարդ

---

[8] *Կ. Գ ա բ ի կ յ ա ն. Բառագիրք սեբաստահայ գավառալեզվի, Երևան, 1952, էջ 341:*

[9] *Ք ա ջ բ ե ր ո ւ ն ի. Հայկական ծեսեր և սովորություններ.– ԱՀ, հ. VII–VIII, Թիֆլիս, 1901, էջ 161:*

[10] *Նույն տեղում:*

[11] *Ա. Շ ա հ բ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 165–168:*

[12] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վայոց Ձոր, էջ 155:*

տղաները կանաչ-կարմիր ժապավեններ էին կապում խոյի պարանոցին, եղջյուրները զարդարում էին վառվող մեղրամոմերով: Զարդարված խոյի հետ միասին՝ նրանք հանդիսավոր շրջերթ էին կատարում՝ ի տես հանդիսականների: Ավարտելով իրենց ցուցադրությունը և պարերը՝ հինայադրող կնոջ և երաժիշտների առաջնորդությամբ երթը նույն հանդիսավորությամբ ուղևորվում էր հարսնացուի տուն[13]:

Գողթնի մյուս գյուղերում նույնպես կատարվում էր նմանատիպ շրջերթ՝ նախքան հարսնացուի տուն գնալը: Հինայի սկուտեղում հիմնականում դնում էին մրգեր և գաթաներ, իսկ սկուտեղի կենտրոնում՝ նուռ, վրան վառվող մեղրամոմ: Պարտադիր չորս մեղրամոմ էին վառում սկուտեղի շուրջը: Սանամայրը՝ երթի առաջնորդը, մի քանի հոգու հետ միասին, թոյպաշու (ազապբաշու) առաջնորդությամբ, գնում էին հարսնացուի տուն[14]: Կան ազգագավառներ, որտեղ երթում հինա տանողը քավորն է: Հայոց Զորում երթի առաջնորդը քավորն էր, որտեղ ամբողջ ճանապահն անցնում էին պարելով և հինայի սկուտեղը խաղացնելով[15]: Ջավախքում նույնպես երթն ուղեկցվում էր քավորի առաջնորդությամբ[16]:

Քեսապում արարողությունը կատարվում էր ուրբաթ գիշերը: Այն տեղի էր ունենում մեծահասակների հավաքատեղիում՝ օտայում[17], որտեղ հանդիսականները հիմնականում ավագներն և ազապներն էին, որոնք նստում էին ըստ տարիքի՝ կենտրոնական տեղը հատկացնելով փեսա-թագավորին և խաչեղբորը: Խնջույքի ընթացքում հարսանիքի կազմակերպիչը՝ եիկիտպաշին (ազապբաշին), պղնձե խոր ափսեով բերում էր հինան: Արարողապետի՝ հինա շաղախելու պահը ուղեկցվում էր հանդիսականների երգով, որը կատարվում էր փոխնեփոխ: Երգը կոչվում էր՝ «Հինա պատրաստել»: Երգի առաջին տունն անպայման կատարվում էր արարողապետի կողմից: Երգի ավարտից հետո հինայի պղնձե ափսեն մոտեցվում էր փեսային և բարձրաձայն հայտարարվում.

Ըսպիտուօկ մուրէօք	Ճերմակ մորուք
Սիվ մուրէօք	Սև մորուք
Հուօրս, փիսու	հարս ու փեսա
Մինծ, պըզտէկ	մեծ ու փոքր
Հէրէօստ, ախքուօտ	հարուստ, աղքատ
Իշգէն, տըղու	տղա, աղջիկ
Ըմմընիէն իզնուօն	հրամանով
Պիտէծուօն	Հաճությամբ
Հինի՞մ մը…	Հինայե՞մ…

[13] *Քաջբերունի. նշվ. աշխ., էջ 158:*
[14] *Ե. Լալայան. Գողթն, էջ 126:*
[15] Срб. Лисициан. Армянские старинные пляски. Ереван, 1983, с. 180–181.
[16] *Ե. Լալայան. Ջավախք.– ԱՀ, հ. I, Շուշի, 1895, էջ 251:*
[17] *Հ. Զոլաքյան. Քեսապ, հ. II, Հալեպ, 1998, էջ 37–38:*

Բոլոր երիտասարդները բացականչում էին միաբերան՝ «Հօվը, հօվը» (այո, այո), իսկ մեծահասակները հավանություն էին տալիս, որից հետո արդեն կարելի էր հինայել:

Հինայելու արարողությունը Մուսա լեռում կատարվում էր փեսայի տանը, որին ներկա էին գտնվում ավագների խորհուրդը և երիտասարդները՝ ազապները[18]: Այստեղ հինայելու պարտականությունը ստանձնում էր ազապբաշին: Վերջինս, նվեր ստանալով տղայի ծնողներից, կատարում էր արարողակարգը: Այն հետևյալն էր.

քավորը դիմում էր բոլոր մասնակիցներին.

Բօյուք, քուչուկ	Մեծ ու փոքր
Աղ, սախղարա սախկալ	Ճերմակ ու սև մորուքավոր
Աղալարն իզնիլէ, Բյահյալիրեն իզնիլէ	Աղաների ու քյոհվեների հրամանով
Ջումլէ ուրան յիկիտլիրէն գօնուլէ	նստած երիտասարդների կամքով
Նշանյըլը ղնայը՞մ մը…	Նշանված տղային հինայե՞նք…

Այդ պահին լսվում էին բացականչություններ, անգամ հրացանաձգություններ՝ ի նշան համաձայնության: Առաջինը փեսայի մատն էին հինայում, այնուհետև քավորի, ազապբաշու, ազապների:

Նկատենք, որ բնագրերում պարզորոշ նկարագրվում է մեծահասակների դերն ու կշիռը հասարակության, համայնքի մեջ: Նրանց պատասխանից էր կախված նշանված տղային հինայելու թույլտվություն տալը, քանի որ այդ պահից սկսած փոխվելու էր տղայի կարգավիճակը թե՛ ընտանեկան, թե՛ հասարակական կյանքում: Դա դիտվում էր որպես նախապատրաստություն, անցումային փուլ ամուսնացող տղայի կյանքում:

Արտաշատի շրջանում արարողությունը մեծ շուքով էին կատարում թե՛ փեսայի, թե՛ հարսի տանը՝ քավորակնոջ կողմից կամ եթե գյուղում կար լավ հինա դնող կին՝ նրան էին հրավիրում[19]: Փեսան, ազապները հավաքվում էին փեսայի տանը, հարսի ընկերուհիները՝ հարսի տանը: Ըստ ժողովրդական բացատրության՝ հինայի արարողության նպատակը նորաստեղծ ընտանիքի ամրությանը, կայունությանը նպաստելն էր: Այրիացած կնոջն արգելվում էր արարողությանը մասնակից լինել. նա կարող էր միայն դիտել՝ մի անկյունում նստած[20]:

Տարեց կնոջ կողմից հինա դնելու զուգահեռը հանդիպում ենք նաև Մուսա լեռում,որտեղ հարսնացուին և երիտասարդ աղջիկներին հինա բաժանողը հասակավոր կին էր[21]:Պառավ կնոջ կերպարի գործառույթն այս արարողության մեջ կարևորվում է այն հանգամանքով,

---

[18] *Գ. Գ յ ո զ ա լ յ ա ն. Մուսա լեռան ազգագրությունը, Երևան, 2001, էջ 156–157:*

[19] *ԴԱՆ, 2011, Արտաշատի շրջան, գյուղ Այգեստան. Օնիկ Թադևոսյանի պատմելով՝ իրենց գյուղում* Կատինա *անունով մեծ կին կար, հարսանիքների հինան նա էր դնում, միշտ նրան էին կանչում:*

[20] *ԴԱՆ, 2011, Արտաշատի շրջան, գյուղ Այգեստան, ասացող՝ Օֆիկ Սահակյան:*

[21] *Գ. Գ յ ո զ ա լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 154–155:*

որ նա է բախտ, երջանկություն բաժանողը: Նրա ձեռքերում է գտնվում նոր կյանքի փուլ մտնող երիտասարդների բախտը: Բացի այդ՝ կան հմայական բազմաթիվ աղոթքներ, որտեղ հիշատակվում է «անհիշատակ պառավը»՝ որպես երջանիկ բախտի արժանացնողի.

Ասպած օղորմի բոբիկ պառվըկեն
Անիշատակ խաշին որկեն,
Յոթ դիր Հէրուսաղեմ ա գացեր,
Խառնած ծամին, խառնած կաժին,
Լոռ աղջկեն բախտի բանալ ա ուզեր[22] / Շատախ/:

Կիլիկիայում[23] հարսի ձեռքի հինայից բերել են փեսայի տուն՝ վրան ավելացնելով նոր հինա, շաղախել և առաջինը, որպես օրենք, փեսայի, հետո քավորի, ազապբաշու և ազապների ճկույթ մատներն են հինայել: Հինայի ափսեի չորս կողմերը վառված են եղել թվով չորս մեղրամոմեր: Հարսնացուի տանը ընթրելուց անմիջապես հետո՝ արարողությանը բնորոշ երգերով քավորակինը հինայում էր հարսի ձեռքերը: Շատ ազգագավառներում հինայում էին ոչ միայն ձեռքերը, այլև ոտքերը, իսկ քաղաքային միջավայրում ընդունված էր հինայել հարսի գլուխը: Կիլիկիայում հարսի աջ ձեռքի միայն ափն էր հինա դրվում: Այդ մասին վկայակոչվում է հինայելու երգի տեքստում.

Հինան մերեցի, շաղախեցի,
Հինայեցեք հարսին, շնորհավոր լինի,
Աջ ձեռքդ տուր, թող հինայվի,
Հինայեցեք հարսին, շնորհավոր լինի…[24]

Մուշ-Տարոնում հինա էին դնում հարսի ձեռքերի ափերը և եղունգները՝ բաց թողնելով ձեռքի երեսի կողմը, ապա կտորով կապում[25]: Բալուում հինայի արարողության ընթացքում կատարվող «Բալու քաղաք շինուեր է» հինայումի երգի մի հատվածում հիշատակվում է հետևյալը.

Բալու քաղաք շինվել է,
Էրկաթէ դուռ դըրվել է,
Ախ, ըսի, մըտնիմ ներսը,
Եարըս մէջը կորեր է:
Աղավնի զարկին ինկավ
Թև ու թիկունք կորավ
Հեյ մալ ըսի տեսնիմ
Ինքը իրան ոտքի էլավ…[26]

---

[22] *Ս. Հարությունյան. Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006, էջ 142:*
[23] *Վ. Սվազլյան. Կիլիկիա արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, 1994, էջ 138–139:*
[24] *Նույն տեղում:*
[25] *Ե. Լալայան. Մուշ-Տարոն.– ԱՀ, հ. XXVI, Թիֆլիս, 1916, էջ 164:*
[26] *Պ. Ալահայտոյան. Բալուի և տարածաշրջանի երաժշտական ազգագրական հավաքածու, Կալիֆորնիա, 2009, էջ 205:*

Նոր Նախիջևանում հարսնացուի սենյակի կենտրոնում կամ անկյունում նստում էին երաժիշտները և նվագում հինայելու հատուկ երգի եղանակը՝ «Ալկելին»: Հանդիսական աղջիկները, վառած կերոններ բռնած, մեկ-մեկ պարելով, խաղացնում էին հինան, այնուհետև սկսում էին հարսի գլուխը հինա դնել, իսկ վերջում աղջիկներից յուրաքանչյուրը մի-մի մատ հինա էր քսում իր ձեռքի ափին՝ որպես տարում[27]*:*

Հ. Աճառյանի արմատական բառարանի համաձայն Alcanna, alhena *նշանակում է հինա*[28]*, որտեղից էլ երգի անվանումը: Տվյալ երգատեքստից մեջբերենք հետևյալ քառատողը.*

Հինա տրին, պաղնիք տարան,
Չիլֆիւ մազս փէրչամ արին,
Կուլուխս ալ փոշի կապէցին,
Սիրելի քույրիկնէր, տարոսը ձէզ…[29]

Համշենահայերի և պոնտահայերի մեջ տարածված էր հարսանիքից մի օր առաջ ազգականների, մոր և ընկերուհիների հետ աղջկա բաղնիք գնալը, ուր և տեղի էր ունենում հինայադրում[30]*: Քաղաքային միջավայրում հինայումը հիմնականում կատարվում էր բաղնիքում. Նոր Նախիջևանում, Տրապիզոնում «Ալկելին» երգատեքստի մեջ հիշատակվում է բաղնիքը, որտեղ հարսի գլուխն էին հինա դրած լինում:*

Հինան, ինչպես նշվում է երգերում, նաև երջանկության, ուրախության, նոր կյանքի, հաջողակ, երջանիկ բախտ բացվելու հետ է կապվում.

Աղջի հինեդ էկավ վերին կալերէն
Վար է թափել նշխուն թղթի ծալերէն
Բաղդդ լավ է գնա էնոր յետևէն
Թող դուշմանը հալի-մաշի աշէլէն…[31]:

Բորչալուի գավառում հանդիպում ենք հետևյալ երգատեքստը.

Հարսնածն էկավ վերին կալերով
Խինէն բերին թղթի ծալերով
Ախպեր չունիմ, ձիու դիզկին խաղցնա
Տանի ճամբեն, բարով դարձնա[32]:

---

[27] *Ե. Շահազիզ. Ծեսեր և սովորություններ, Նոր Նախիջևան.– ԱՀ, հ. VII–VIII, էջ 84–85:*

[28] *Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 94–95:*

[29] *Ե. Շահազիզ. նշվ. աշխ., էջ 84–85:*

[30] *Բ. Թոռլաքյան. Համշենահայերը ու պոնտահայերը.– ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, թղթ. 46/1, թ. 113:*

[31] *Ա. Մխիթարյանց. Փշրանքներ Շիրակի ամբարներից, հ. 1.– Էմինեան ազգագրական ժողովածու, Մոսկվա, Ալեքսանդրապոլ, 1901, էջ 243–244:*

[32] *Խ. Սամուելյան. Մայրական իրավունք.– ԱՀ, հ. 19, Թիֆլիս, 1910, էջ 43:*

Երգի բնույթը տխուր է: Այն կատարվում է հարսնաքույրերի կողմից՝ հարսի մազերը հյուսելու ընթացքում:

Ակնում արարողությանը մասնակցում էին և՛ տղամարդիկ, և՛ կանայք[33]: Քավորակինը մոտենում էր հարսնացուին՝ բյուրեղապակյա ափսեի մեջ բրգաձև շաղախած հինայով, որի կենտրոնում դրված էր լինում ոլորված մոմ: Երաժշտության ուղեկցությամբ՝ հարսներն ու աղջիկները քավորին և քավորակնոջը շրջապատելով՝ երգում էին.

Աս հինան ան հինան չէ
Ղրկողն ալ ինչ աղվոր մանչ է:
Ոսկի ամանի մեջ հինաս շաղեցին,
Արծաթե սանտրով խոպոպս քակեցին…

Հինադրեքից անմիջապես հետո սկսվում էր թնպարը, որի ընթացքում պարող զույգերն այնպես էին իրար հաջորդում և փոփոխվում, որ փեսան ու հարսը անկախ իրենց կամքից հայտնվեն դեմ դիմաց:

Սասունում հարսին զարդարելիս, զգեստը հագցնելիս կանայք երգում էին.

Զհերիկ խափեցին գուռե մե գինով,
Զմերիկ խափեցին թոփիկ մե շիլով,
Զաղբեր խափեցին ջուղտակ մե ջզմով,
Զքուրիկ խափեցին մատիկ մե հինով,
Զփարու հանգուց արձակեցին,
Զաղջիկ մամուց ջոկեցին[34]:

Հարսի հինայադրման արարողության մեջ հիմնականում գերակշռում են դանդաղ պարերն և լացերգերը՝ ողբին բնորոշ[35]: Հարսանեկան ծեսում դա ունի իր բացատրությունը. հինադրեքը այն նշանն է, որը հանդիսանում է սահմանեզր մահվան և նոր կյանքի վերածնման միջև:

Հինան պատրաստում են հատուկ աղոթք ասելով, որին հանդիպում ենք հմայական աղոթքներում: Ահա այն.

Արեգակ չորցուր,
Լուսընակա, կարմրցրու,
Ըռքո, Սրրգո,
Քթիդ արյուն կաթեցուր[36] / Քղի /:

Ուշադրություն դարձնելով հինայվող ձեռքին՝նկատում ենք, որ փեսայի ճկույթ մատը, իսկ հարսի ձեռքի միայն ափն ու եղունգներն էին հինա դրվում:Ձեռքի խորհրդանշական կապը հինայի հետ մի դեպքում մեկնաբանվում է որպես տարոս,մի այլ դեպքում՝այն կապ

[33] *Վ. Թ ե մ ո ւ ր ճ յ ա ն. Գամիրքի հայերը.– ՀԱԲ, հ. 1, Երևան, 1970, էջ 122:*
[34] *Վ. Պ ե տ ո յ ա ն. Սասնա ազգագրություն, Երևան, 1965, էջ 242:*
[35] A. S a y g u n. Bela Bartok's Folk Music Research in Turkey. Budapest, 1976, p. 359.
[36] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 164:*

ունի այլ երևույթների հետ: Ճկույթն առասպելական իմաստով համարվում է միջնորդ, կապող, հաղորդակցող օղակ տարբեր անձանց (հատկապես տարբեր սեռերի), տարբեր աշխարհների (այս ու այն կողմի կյանքի, մահվան, կենդանիների և մեռածների) միջև և ունի ծիսական նշանակություն[37]: Ելնելով տվյալ փաստերից՝ կարելի է ասել, որ հինայվող ձեռքը խորհրդանշել է ամուսնացող զույգի ոչ միայն անցումային կարգավիճակը (աղջկանից՝ կին, տղայից՝ տղամարդ), այլ նաև՝ սեռական ուժն ու ամրությունը:

Գամիրքի Կեմերեկ շրջանում հինադրեքը՝ երկու սեռերի խորհրդավոր և գաղտնի արարողություն էր[38]: Արարողության վկաներ էին ընտրվում միայն հարսնաքույրն ու ազապաշին: Դա տեղի էր ունենում շաբաթ կեսգիշերին, բոլորից գաղտնի՝ կանխորոշված վայրում: Նշանված հարսն ու փեսան հանդիպելով՝ առանձնանում էին, ողջագուրվում և հինայված ձեռքերի թաշկինակները արձակելով՝ միմյանց խոստովանում էին իրենց սերը՝ ասելով «Էռջի սերս դուն իս: Էռջին եղ որ աչքս պղտոր բանամ, քեզ պըտ որ տեսնամ»[39]: Կեմերեկի որոշ գյուղերում հարսնացուի լոգանքից հետո էր հինադրեքը կատարվում: Հարսնացուին առաջնորդում էին թոնրի մոտ իրեն հատկացված տեղը, որը լինում էր սովորականից բարձր: Երեք անգամ նստել-կանգնելուց հետո՝ քավորակինը նրա ափի մեջ մի պտղունց օրհնված հինա և մետաղադրամ էր դնում: Այնուհետև տղա երեխաներից մեկը հանում էր ափի միջից դրամը: Այս երևույթը սերտորեն կապվում է սերունդը շարունակելու և բեղմնավոր կյանք ունենալու հավատալիքի հետ:

Հինահանը՝ *հարսին հինայից հանելու գործողությունը՝ ոտքերը, ձեռքերը, մազերը լվանալու արարողությունը, կատարվում էր հաջորդ օրը՝ շաբաթ առավոտյան, բուն հարսանյաց հանդեսի օրը:*

Ինչպես տեսանք, հինան դրվում էր մազերին, ձեռքերին և ձեռքի եղունգներին, ոտքերին ու ոտքի եղունգներին, որոնք մարմնի վերջույթներն են և ենթակա են զանազան հիվանդությունների, և որոնք հանդիսանում են որպես սահման և պատահական չէ, որ մարմնի կոնկրետ այդ մասերում են կատարվում հմայությունները: Բացի այդ՝ բազմաթիվ հավատալիքներ կապվում են մարմնի վերջույթների հետ[40]:

Հինան հարսանեկան համատեքստում երջանիկ բախտի, սեռական ուժի խորհրդանիշն է[41], ինչի վկայությունն են հետևյալ բանաձևերը. «Որը կրհինայէ, որը կրխնայէ» («Մեկին շատ է տրվում, մյուսին՝ քիչ»)[42], «Ձեռքդ ու ոտքդ դնենք հինա, քեզի կրսենք ել ու գնա»[43]:

Ամփոփելով՝կարելի է ասել, որ հինայի գիշեր արարողությունը հրաժեշտ էր պատանեկան,ազատ կյանքին, դա այն սահմանեզրն էր, որին անմիջապես հաջորդող

---

[37] *Ս. Հարությունյան. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 306–307:*

[38] *Վ. Թեմուրճյան. նշվ. աշխ., էջ 122:*

[39] *Նույն տեղում, էջ 121–122:*

[40] *Ջ. Ֆրեզեր. Ոսկե ճյուղը, Երևան, 1989, էջ 278–284:*

[41] *Կ. Գաբիկյան. Բառագիրք սեբաստահայ գավառալեզվի, Երուսաղեմ, 1952, էջ 341, Ստ. Մալխասյան. Հայերեն բացատրական բառարան, հ. III, Երևան, 1944, էջ 107, Հր. Աճառյան. Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 658–659:*

[42] *Կ. Գաբիկյան. նշվ. աշխ., էջ 620:*

[43] *Նույն տեղում, էջ 341:*

օրը սկսվելու էր նոր կյանքի շրջափուլ մտնելու ընթացքը: Ըստ Սրբ. Լիսիցյանի՝ հինադրեքը նախնական ծեսի վերապրուկ է, երիտասարդ աղջիկներն ու տղաները հինայել են իրենց մարմնի որոշ մասերը նախաամուսնական արարողություններում, ինչը կրել է իր մեջ երիտասարդ կյանքի և սեռական ուժի հավատալիքը[44]:

Հարսանիքից առաջ՝ ուրբաթ օրվա գիշերը, հավաքվելու արարողությունն այսօր էլ շարունակում է կատարվել Հայաստանի շրջաններում, բայց այն տարբերությամբ, որ հինա դնելը դուրս է մղվել բուն արարողակարգից:

СИМВОЛИКА ОБРЯДА НАЛОЖЕНИЯ ХНЫ В СВАДЕБНОМ ЦИКЛЕ АРМЯН

НАРИНЕ ШАМАМЯН

Р е з ю м е

В армянском свадебном цикле день наложения хны четко определен. Во всех этнопровинциях этот день приходится на ночь пятницы, но иногда бывают исключения. Весь процесс наложения хны сопровождается торжественными зрелищами, неотделимой частью которых являются сольные пляски, песни и шествия. Церемония проводилась в первую очередь в доме жениха, а затем дома у невесты.

THE SYMBOLICS OF HENNA RITUAL IN THE WEDDING CYCLE OF ARMENIANS

NARINE SHAMAMYAN

S u m m a r y

Henna ceremony day is clearly fixed within Armenian wedding cycle. In all Armenian ethnoprovinces this ritual is organized on Friday night; but sometimes there can be exceptions. The whole process of Henna ceremony is accompanied by ceremonial performances, which include sacral dances and songs. First of all, the ceremony is held in bridegroom's house and after in bride's house.

[44] С р б. Л и с и ц и а н. *Նշվ. աշխ., էջ 180:*